Remove Watermark Now

Քաղ. գործ ԾԴ/3378/02/17

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 հոկտեմբերի 2017թ. ք. Գյումրի

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ.Խաչատրյանս, ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերն ըստ հայցի [redacted] ընդդեմ [redacted] երրորդ անձ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին, քննության առնելով [redacted] ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին՝

ՊԱՐԶԵՑԻ

05.09.2017թ.-ին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում մուտքագրվել է [redacted] հայցադիմումն ընդդեմ [redacted] երրորդ անձ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու, տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին:

Դատարանի 06.09.2017թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

24.10.2017թ. [redacted] ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ ներկայացված հայցի առարկան կազմում է Հայցվորի երեխաների հետ տեսակցության կարգի պահանջը: Ըստ էության սույն գործով կայացվելիք դատական ակտով որոշվելու է Հայցվորի իր երեխաների հետ տեսակցելու հետ կապված հարաբերությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը:

Ներկայումս Հայցվորը զրկված է իր երեխաներին տեսակցելու հնարավորությունից, քանի որ իր այդ ծնողական իրավունքի իրացմանը ամեն կերպ խոչընդոտում է Պատասխանողը: Պատասխանողի կողմից դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան, որում խոսք է գնում Հայցվորի և երեխաների միջև կապվածության բացակայության մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի կողմից երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջը վարույթ է ընդունվել 06.09.2017թ.-ին, իսկ գործով առաջին դատական նիստը նշանակվել է 06.12.2017թ.-ին՝ երեք ամիս անց, մինչև պահանջի վարույթ ընդունվելը Հայցվորը ևս 4-5 ամիս զրկված է եղել երեխաներին